ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 1044-Ն | *Տեսակը* | Ինկորպորացիա |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀՊՏ 2007.10.03/49(573) Հոդ.996 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 30.08.2007 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 18.09.2007 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 13.10.2007 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2007 թվականի N 1044-Ն

### ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «թ» կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում ապահովել բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի իրականացման մեթոդական ցուցումների, ինչպես նաև անհրաժեշտ տիպային ձևատեսքերի՝ մոնիթորինգային արձանագրությունների և դաշտային ձևերի մշակումն ու հաստատումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ**

**Ս. Սարգսյան**

2007 թ. սեպտեմբերի 18
Երևան

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2007 թվականի**
**օգոստոսի 30-ի N 1044-Ն որոշման**

# Կ Ա Ր Գ

## ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը:

2. Բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգը (այսուհետ՝ մոնիթորինգ) բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, բուսական և կենդանական օբյեկտների, դրանց որակական և քանակական ցուցանիշների, ապրելավայրերի, բնական պաշարների, տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների վիճակի ռեժիմային դիտարկումների, գնահատման, արագ արձագանքման ու զարգացման ընթացքի կանխատեսման համակարգ է:

3. Մոնիթորինգն ապահովում է բնության հատուկ պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման համար օբյեկտիվ տեղեկատվության ստացումը, որն անհրաժեշտ է էկոհամակարգերի, բնակության միջավայրերի և կենսաբանական տեսակների պահպանության ու կայուն օգտագործման համար:

4. Մոնիթորինգի համար հիմք են հանդիսանում բուսական և կենդանական օբյեկտների գույքագրումն ու հաշվառումը, որոնք իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և նպատակաուղղված են կենսաբանական բազմազանության, բնական ռեսուրսների քանակական ու որակական ցուցանիշների բացահայտմանը:

5. Մոնիթորինգի իրականացման փուլերն են տվյալների հավաքագրումը, գրանցումը, վերլուծությունը, ամփոփումը, երևույթների կանխատեսումը, տվյալների բազայի վարումը և տվյալների տրամադրումը տարբեր շահագրգիռ կողմերի:

## II. ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Մոնիթորինգի իրականացման նպատակն է, մշտապես գնահատելով էկոհամակարգերի ու դրանց բաղադրիչների վիճակի փոփոխությունները և կանխատեսելով բնական ու մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացումը, բարելավել բնության հատուկ պահպանվող տարածքների շարունակական կայուն կառավարումը՝ ներառյալ կենսաբազմազանության պահպանությունը և կենսաբանական պաշարների օգտագործումը:

7. Մոնիթորինգի խնդիրներն են՝

1) բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնողների՝ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը՝ համապատասխան որոշումների ընդունման համար.

2) կենսաբանական բազմազանության տարածվածության, տեսակային կազմի, քանակի, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակի բացահայտումը.

3) էկոհամակարգերի ու դրանց բաղադրիչների քանակական և որակական փոփոխությունների ընթացքի գնահատումը և կանխատեսումը.

4) էկոհամակարգերին ու դրանց բաղադրիչներին սպառնացող մարդածին գործոնների բացասական ազդեցության բացահայտումը և դրա կանխարգելման միջոցների մշակումը.

5) բնական պաշարների օգտագործման նորմավորման հիմնավորմանը նպաստելը՝ ըստ ծավալների և ժամկետների.

6) բնության հատուկ պահպանվող տարածքների մասին տեղեկատվական համակարգի ստեղծմանը և դրա անխափան գործունեությանը նպաստելը.

7) բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակմանը նպաստելը:

## III. ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

8. Մոնիթորինգի օբյեկտներն են՝

1) բուսական և կենդանական տեսակների բնակության վայրերը, կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները, տեսակների գոյության համար առանձնահատուկ դեր խաղացող էկոհամակարգերը.

2) կենսաբանական բազմազանությունը՝ առաջնահերթ նշանակություն տալով՝

ա. բույսերի ու կենդանիների այն տեսակներին, ցեղերին, ընտանիքներին կամ այլ կարգաբանական միավորներին, որոնց տարածվածությունը սահմանափակվում է հարաբերականորեն ոչ մեծ աշխարհագրական շրջանով (էնդեմիկներ),

բ. բույսերի ու կենդանիների այն տեսակներին, ցեղերին, ընտանիքներին կամ այլ կարգաբանական միավորներին, որոնք պահպանվել են անցած երկրաբանական ժամանակաշրջաններից և ներկայումս հազվագյուտ են հանդիպում (ռելիկտներ),

գ. Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի համար օտարածին այն տեսակներին, որոնց ներթափանցումը

բնական էկոհամակարգեր և արագ բազմացումը սպառնում է էկոհամակարգերի կայունությանը (ինվազիվ տեսակներ).

3) Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակները, ինչպես նաև դրանց համակեցություններն ու պոպուլյացիաները.

4) տնտեսական արժեք ներկայացնող և արդյունագործական նշանակություն ունեցող բուսական ու կենդանական տեսակները.

5) բուսական ու կենդանական համակեցություններն ու պոպուլյացիաները և դրանց գերիշխող (դոմինանտ) տեսակները.

6) բնության հատուկ պահպանվող տարածքների հողերի, մակերևութային ջրերի, մթնոլորտի աղտոտվածությունը.

7) անօրինական տնտեսական գործունեությունը (տնտեսական և բնակելի օբյեկտների, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների ապօրինի շինարարությունն ու շահագործումը, ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության ու շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը, օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների ապօրինի շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը և այլն), բնական ռեսուրսների ապօրինի օգտագործումը (ապօրինի անտառահատումներ, որս, ձկնորսություն, հողօգտագործում և այլն).

8) «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի այլ խախտումներ:

## IV. ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

9. Միջազգային և հանրապետական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգը կազմակերպում և իրականացնում է շրջակա միջավայրի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմին), իսկ համայնքների վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգը կազմակերպում են տեղական ինքնակառավարման մարմինները:

***(9-րդ կետը փոփ. 10.10.19 N 1442-Ն)***

10. Մոնիթորինգի իրականացումը փուլային գործընթաց է, որը ներառում է՝

1) ելակետային տվյալների ստացումը և հավաքագրումը՝ սույն կարգի 8-րդ կետում նշված մոնիթորինգի օբյեկտների դիտարկման միջոցով.

2) ստացված տվյալների վերլուծությունը, ամփոփումը, կանխատեսումների կազմումը.

3) տվյալների բազայի վարումը և տեղեկատվության տրամադրումը.

4) մոնիթորինգի տվյալների հիման վրա լիազորված պետական մարմնի կողմից անհրաժեշտ բնապահպանական գործողությունների իրականացման վերաբերյալ որոշումների նախագծերի մշակումը՝ շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովմամբ (տարածքային կառավարման մարմիններ, համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ, բնօգտագործողներ և այլն):

11. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված մոնիթորինգի ելակետային տվյալներն ստանում են՝

1) միջազգային և հանրապետական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ լիազորված պետական մարմնի կազմում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունները, իսկ հավատարմագրային կառավարման դեպքում՝ հավատարմագրային կառավարիչը.

2) տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ պահպանությունը և օգտագործումն իրականացնող մարմինները:

12. Մոնիթորինգի ելակետային տվյալների ստացման և հավաքագրման նպատակով ստեղծվում է դիտարկման ցանց, որը ներառում է մշտական կամ ժամանակավոր (սեզոնային) դիտակետեր, փորձահրապարակներ, երթուղիներ՝ դիտարկումների, ստուգայցերի, երթուղային հետազոտությունների և ուսումնասիրությունների անցկացման համար:

13. Մոնիթորինգի իրականացման նպատակով դիտարկման ցանցը նախագծվում է յուրաքանչյուր բնության հատուկ պահպանվող տարածքի համար՝ հաշվի առնելով տվյալ տարածքում սույն կարգի 8-րդ կետում նշված մոնիթորինգի օբյեկտների առկայությունը, դրանց տարածվածությունը, վիճակը, մարդածին ներգործության ծանրաբեռնվածությունը:

14. Դիտարկման ցանցի տեղաբաշխման նախագծերը մշակվում են սույն կարգի 11-րդ կետում նշված համապատասխան մարմինների ու կազմակերպությունների կողմից և հաստատվում են լիազորված պետական մարմնի կողմից:

15. Դիտարկման ցանցի պահպանումը, սպասարկումը և անխափան գործունեությունը համապատասխան անձնակազմի և տվյալների հավաքագրման համար անհրաժեշտ սարքավորումների միջոցով ապահովում է տվյալ բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանությունը և օգտագործումն իրականացնող մարմինը:

16. Մոնիթորինգի իրականացման ընթացքում ձեռք բերված ելակետային տվյալները լրացվում են լիազորված պետական մարմնի կողմից հաստատված ձևատեսքերում՝ մոնիթորինգային արձանագրություններում և դաշտային ձևերում, որտեղ գրանցվում են մոնիթորինգի ենթարկվող յուրաքանչյուր օբյեկտի մասին ստացված դաշտային տվյալները:

17. Բոլոր կատեգորիաների և նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքներում ստացված մոնիթորինգի ելակետային տվյալները ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում ներկայացվում են լիազորված պետական մարմին, որն իրականացնում է սույն կարգի 10-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված մոնիթորինգի տվյալների համակարգումը և տվյալների բազայի վարումը:

18. Լիազորված պետական մարմինն ապահովում է մոնիթորինգի տվյալների մուտքագրումը, դասակարգումը, վերլուծությունը, պարբերական թարմացումը և հասարակայնության համար տեղեկատվության մատչելիությունը: Այդ նպատակով կառուցվում է համապարփակ միասնական տեղեկատվական համակարգ, որն ընդգրկում է բոլոր բնության հատուկ պահպանվող տարածքների ելակետային տվյալների փոխհամադրելի բազաները:

19. Մուտքագրված տվյալները վերլուծվում և գնահատվում են մուտքագրման օրվանից մինչև 20 օրվա ընթացքում, որից հետո տեղադրվում են համապատասխան վեբ-կայքում:

20. Բոլոր կատեգորիաների և նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգը կազմակերպվում և իրականացվում է լիազորված պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների համաձայն:

21. Բնության հատուկ պահպանվող տարածքների անտառների վերաբերյալ ստացված մոնիթորինգի տվյալները ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում ներկայացվում են անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում լիազորված պետական մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի N 198-Ն որոշմամբ սահմանված կարգով:

22. Մոնիթորինգը կազմակերպվում ու իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին:

***(հավելվածը փոփ. 10.10.19 N 1442-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**